«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1084-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 6-ի N 619-Ա Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ հաստատված N2 հավելվածի 5-րդ կետը՝

1. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության կառա-վարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Պաշտոնական ինկորպորացիայի ենթարկված նորմատիվ իրավական ակտերի էլեկտրոնային ժողովածու կազմելու և տրամադրելու կարգն ու ժամկետները սահմանելու և իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիայի իրականացման կարգը հաստատելու մասին» N 1084-Ն որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ին: